ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 15, ԹԻՒ 23. ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 144

WTF. 2 8-9

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապագայի զուշակութիւն· թէ երբ պիտի կործանի Թուրքիա ևն.—Զուարճալի ծողով և խնդիր.— Նամակ Հէյվըրհիլէն.— Պոսթոնի Հայերը.—Մութերորդ Տարեշրջան ՀԱՅԿԻ.— Ցանկ Նիւթց.—Վիճակագիրք Ամերիկայի Հայոց.— Այլևայլք.—

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ ԸՊՏԳԻՏՅԻ

Թէ ե՞րբ պիտի կործանի Թուրքիա և թէ ի՞նչ լուծում պիտի տրուի հայկական խնդրոյն։

Դ

Թէ Միջազգային Նախանձու արտաքին նեցուկը որքան ատեն տակաւին պիտի շարունակէ վեր բռնել զԹուրքիա՝ ոչ ոք կրնայ ասել, բայց ամեն ոք կը հասկնայ, թէ այդ նեցուկին բնութիւնն է անհաստատութիւն։ Թուրքիան բաշխելու զօրաւոր համաձայնութիւն մը երբ որ տեղի ունենայ մեծ տերութեանց մի քանիին մէջ, բաշխումն ալ կ'իրականանայ, և այդ կրնայ նոյն իսկ 1898 ին պատահիլ, կամ, ընդհակառակն, ուշանալ տարիներով։

Իսկ Թուրքիոյ ներքին վիճակին գալով, յայտնի է թէ վերջանալու դատապարտուած վիճակ մ'է այն։ Օսմանեանը Եւրոպական մեծ պետութիւն մը կը համարուի, բայց Եւրոպական բնութիւն չունի։ Տարածութեամբը վիթխարի է, զարգացմամբ՝ դաճաճ։ ԺԹ. դարու մէջ կ'ապրի բայց միջին դարու գոյութիւն մը կը շարունակէ։ Զարգացման ներքին ծիլերէ (germs) զուրկ կը թուի, և միայն արտաքին բռնութեան տեղի տալով է որ ո և իցէ նորութիւն կ'ընդունի։ Յորմէ հետէ Օսմանցին Եւրոպացի եղեր է անունով, Եւրոպա ունեցած է Իտալական Վերածնութիւնը (գրական և արուեստական), Գերմանիոյ Բարեկարգութիւնը (կրօնական), Ֆռանսական Մեծ Յեղափոխութիւնը (քաղաքական), իսկ Թուրքիա բոլոր ժամանակ զբաղած է իւր միակ ախորժելի գործովը—պատերազմով և կոտորածներով, և պատերազմով ու կոտորածներով ալ պիտի գտնէ իւր վախճանը։

Ե

Թէ Հայաստանի վիճակն ինչ պիտի լինի երբ Թուրքիոյ բաշխումը տեղի ունենայ, այն ալ կանխասացել դժուար է։ Լաւագոյն բանը որ կրնայ պատահիլ, է Ֆռանսական տիրապետութիւն ի Սիւրիա—որ բաւական հաւանական պատահականութիւն մ'է—և այսպէսով ի Հարաւոյ Կիլիկիոյ ունենալ Եւրոպական մեծ պետութիւն մը մեզի դրացի և բարեկամ։ Իսկ Մեծ Հայքի համար անհրաժեշտ կ'երևի Ռուսական տիրապետութիւնը, որով Հայաստանի օսմանեան և ռուսական բաժիններու միացումը ռուսական դրօշակի ներքև։ Ուրիշ առթիւ ասեր ենք, թէ այդ պիսի միացում մը բաղում առաւելու-

թիւններ ունի մեզի համար. և չենք վախնար թէ Ռուսիոյ պիտի հուզէ հայութիւնը-խեղդել։ Այդ ահագին պետութեան զանազան խոշոր մասերը կամ ցեղերը կամաց կամաց ինքնօրէն նահանգներ պիտի լինին Ռուս կայսրութեան։ և Հայաստան ալ պիտի լինի նոյնին ինքնօրէն նահանգներէն մէկը, պահպանելով իւր ազգային լեզուն և գրականութիւնը, բայց քաղաքական և միջազգային տեսակէտով բոլորովին և սրտագին միապած լինելով Ռուսիոյ։ Իրաց ընթացքը դէպ այդպիսի վիճակ մը կը թուի միտիլ։ Այս խնդիրներուն նորէն պէտք է վերադառնանք։

Ռուսական նոր շաբաթաթերթ մը, «Ռուսիա և Ասիա», Կիէվի համալսարանի ուսուցիչ Գրէնի խմբագրութեամբ, հրատարակուիլ սկսած է։ Թերթին բարձր ոգին և ուղղութիւնը կը տեսնուի հետևեալ տողերէն, «Արձագանք»ի մէջ թարգմանուած։ — «Նշանաբան ընտրելով ծառայել ռուսական իդէային, մենք այդ իդէան չենք հասկանում բռնութիւն և ճնշումն ուժեղի իրաւունքով։ Մեր կարծիքով Ռուսիայի կատարելիք գործերը և նպատակները պիտի աւելի բարձր լինին։ Ուստի մենք պիտի պահպանենք և պաշտպանենք ռուսական հողի վրայ եղած բոլոր հպատակների շահերը առանց կրօնական և ազգայնական խտրութեան, որովհետև մեր կարծիքով մեր հզօր հայրենիքի քաղաքակրթական բոլոր միսիան պիտի լինի ազգերի եղբայրութիւն ստեղծել ռուսական միակ դրօշակի տակ»։

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԺՈՂՈՎ ԵՒ ԽՆԴԻՐ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Այդ ժողովը Նոյ. 22 ին տեղի ունեցաւ։ Հրաւիրաթուղթը ծանուցած էր թէ գլխաւոր խնդիրը պիտի լիներ եպիսկոպոսի մը պէտքը, և ստորագրուած ու կնքուած էր ազգային Հոգաբարձութեան քարտուղարի կողմէն։ Գնացինք ժողովի։ Հայր Վաղինակ վարդապետ կը նախագահէր, Տիար Տիգրան Քէլլէկեան ատենապետ ընտրուած էր։ Հոգաբարձութիւնը աւարտելու վրայ լինելով իւր պաշտօնավարութեան չրջանը՝ կը հրաժարէր։ Այդ պարզ էր։ Բայց երբ «գլխաւոր» խնդիրը ձեռք առնուզ ուզեցին ոմանք, այսինքն եպիսկոպոս մը նիւ Եորքի կամ Ամերիկայի Հայոց համար բերել տալու խնդիրը, ի զարմանս ամենուն յայտարարեց Հոգաբարձութիւնը թէ ինքը այդպիսի խնդիր մը առաջարկած չէ և ոչ ալ իւր քարտուղարին արտօնութիւն տուած առ այդ։ Ալ ոչ ոք խորը փորել և դարձուածին գաղտնիքը երևան հանել կրցաւ։

Միայն մի քանի երիտասարդաց հնչուն և համարձակ ատենախօսութիւններէն երևցաւ թէ իրենք ազգին ամենէն կարող երկու եպիսկոպոսներէն մէկը կուզեն Ամերիկայի համար։

Հիմա երեք վարդապետ և, կարծեմ, երեք ալ քահանայ կայ մեր ամերիկեան գաղթականները հովուելու, բաց ի հայ բողոքական քարոզիչներէն։

Վաղինակ վարդապետը առաջին անգամ տեսանք այդ ժողովոյ մէջ, և թուեցաւ մեզ թէ ժողովուրդը կ'ախորժէր անոր խիստ բայց անկեղծ շեշտերէն։ Շիտակը մեզի համար այս եկեղեցականները շատ են ու քիչ չեն, եթէ մեր թիւն ու պէտքը համեմատութեան դնենք մայր հայրենիքի և աւելի ստուար գաղթականութեանց պէտքերուն։ Ինչ պէտք է ուրեմն աւելորդ խնդիրներ ստեղծել և երևակայական պահանջներու վրայ խօսիլ։

Քանի որ տարօրինակ խնդիրներու վրայ է խօսքը, դիտել տանք նաև նոր թերթերու երևումը, մէկ շաբաթաթերթի յՈւստրը, և մէկ շաբաթաթերթի ի Նիւ Եորք, որք տեղական գաղթական Հայերու խնդիրներովը գլխաւորապէս պիտի զբաղին, և անոնց հանրային գործառնութիւններն պիտի հրատարակեն։ Այս ալ տեղական գործերու չափազանց մեծութիւն և շռայլ կարևորութիւն տալ է։ Մեր գաղթականութիւնները, Նիւ Եորքինը լինի թէ Ուստրրինը, Բրովիտէնսինը թէ Պոսթոնինը, չունին տակաւին թուական և բարոյական այն կարևորութիւնը զոր մի քանիներ կը փափաքին ընծայել անոնց, և հետևապէս այդ կարգի թերթեր չեն կրնար հաստատուն կերուան գտնել, նիւթական ապասով և բարոյական ճանձրութեամբ կը դադրին քանի մը ամսուան գոյութենէ ետև, ինչպէս նախկին փորձերը ցուցած են։ Եթէ հայքը եօթը տարի ապրիլ կրցաւ և դեռ

կը յուսայ ապրիլ բազում տարիներ, պատճառն այն է որ իւր էջերուն մէջ նիւթոց համեմատութիւններն ճիշդ պահել աշխատած է, ընծայելով առաջին տեղը այն խնդրոց որք ազգային կարևորութիւն ունենալով՝ թէ Ամերիկայի Հայոց և թէ բոլոր ազգայնոց համար շահեկան են, և երկրորդ տեղը ընծայելով Ամերիկայի հայ գաղթականութեանց վերաբերեալ խնդրոց, որք չափով մը բոլոր ազգին ալ շահեկան են, և եթէ ներկայ թուոյ մէջ հրատարակուած «Ցանկ Նիւթոց»ը աչքէ անցնէ ոք, պիտի տեսնէ թէ բաւական խոշոր տեղ տրուած է հայքի 1897 թուականին մէջ Ամերիկայի Հայոց խնդիրներուն։

ՆԱՄԱԿ ՀԷՑՎԸՐՀԻԼԷՆ ՀԷՑՎԸՐՀԻԼԻ ՀԱՅԵՐԸ

Բաղաքիս հայ գաղութը վերջերս պէտք զգացած էր գրադարանի մը կարևորութիւնը՝ սակայն չէր կարող իւր նոյազ թուով առանձին գրադարան ունենալ, դիմեց Լօրէնսի գրադարանին որ միջոցներ ընծայէ ընթերցասէր հայրենակցաց։ բայց երբ մերժուեցաւ, ժողովրդի բարի նախանձը շարժելով Սեպ. 19 ին ժողով գումարելով հանգանակութիւն եղաւ գրադարանի կազմութեան համար։ Նոյն հասոյթով այսօր նորակազմ գրադարանի մէջ ունեցած են 29 հատոր գրքեր (որոնց 10 հատորը Բրովիտէնսի գրադարանէն նուիրուած է) բաւական գրքեր ապսպրուած են Թիֆլիս և Զմիւռնիայ և երեք հատ թերթ։

Ժողովուրդը բաւական մարդավարի և մաքուր են, և մտաւոր և բարոյական զարգացման ձգտումը ունին։ Ամերիկացւոց հետ յարաբերութիւնը բաւական լաւ է։ կիրակի օրերը եկեղեցի կը յաճախեն և կիրակնօրեայ դասին ներկայ կը գտնուին, նաև գիշերային վարժարանի մէջ ուրիշ ազգերէն աւելի հոգ կը տարուի։ Անգործները քիչ են։ Ուրախալի է ըսել թէ իրարու հետ շատ սիրով կ'ապրին կուսակցական վիճաբանութիւնները բոլորովին դադրած են։

ԿԱՐՕ

ՊՕՍԹՈՆԻ ՀԱՅԵՐԸ

Պօսթոն Նոյ. 25 1897.

«Հայք»ի վերջին թիւին մէջ Նիւ Պրիթընէն «Վահէ» ստորագրութեամբ մի քննադատական կար Պօսթոնի Հայոց նըկատմամբ։

Լաւ կը լինէր մեր Պր. Ցօդուածագրին հայացուցել իր «ինտէլիգէնտ»ները ու չքննադատել Ատանացիք որ հոս հայերէն կը սորվին։ Պօսթոնցի անգործ Հայուն պատիւ է թերթն ունենալ իբր «էկլէնճէ» (զբաղում) ու չէ թէ նարտ ու թղթախաղ։

Ճիշտ է թէ «Աթենացին» թղթի փալասներով չըսպաներ իր ժամանակն, բաց «Հայք»ի «Մշակ»ի և «Արձագանգ»ի նման լուրջ թերթերն շարունակ մեր մէջ մուտ գտած են։

Երկու ամիսէ ի վեր ամէն Շաբաթ և Կիրակի երեկոյներ լսարանի ժողովներ ունինք, ուր տեղի կ'ունենան գիտական և ազգային ճառախօսութիւններ և օգտակար վիճաբանութիւններ։ Մեր նուագահանդէսներու վրայ խօսելով (ուրախ ենք որ այդքանը կը յիշէ) կը պախարակէ մեր «Համիտիյէ» Քայլերգը նուագելը, առանց գիտնալու թէ այդ եղանակը հայ մտքի ծնունդ է, և մենք նուագելով կը գնահատենք հայ հանճարն ու կողպուտը ետ կը խլենք։

ԱԹԵՆԱՑԻՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆ

Մասնաւորապէս չնորհակալ կը լինի խմբագրութիւնս եթէ յարգելի բաժանորդք իրենց բաժանորդագրութիւնը անմիջապէս նորոգելով՝ կարող անեն գինքը նոր տոմարը պատրաստել և չփոթութիւններէ ազատ մնալ։

ՀԱՅՏ

Հանդէսը պիտի հրատարակուի 1898 թուականին ևս, քաղաքական, գրական և առողջաբանական պարունակութեամբ, տասնեսկսինգ օրը անգամ մը։

Տարեկան բաժանորդագինն է երկու դոլար (տասը Ֆրանք կամ 4 ռուբլի)՝ ամեն երկրաց համար։

Հասցէն է

EDITOR OF HAIK

341 West 23rd. St., New York

ՅԻՇՆԿ ՆԻՒԹՈՅ
«ՀԱՅԿԻ»
1897

ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ

(Թմբագրականք)

Երես

Քրիստոնէական Հոգի և Վրէժխնդրութիւն 9
Ի՞նչ կ'ուզէ Ռուսիա 11
Պատրիարք (Օրմանեան) և Սուլթանը 10
Քրիստոնէական Համակրութիւն և Հայք 26
Հայոց Զօրութիւնը 41
Ակին կոտորածը և Յեղափոխականութիւն 42
Հայ Ազգին Վերածնութիւնը 57
Հայոց դէմ Յարձակումներ 59
Պատերազմը 73
Քաղաքական Մարդասպանութիւնը կը ծառայէ՞ արդեօք կուսակցութեան մը շահերուն 89
Շրջափոխութիւն և Յեղափոխութիւն 98
Ռուս կառավարութեան գերակշիռ դերը և Հայկական խնդիրը լուծելու կերպը 105
Օրմանեան Պատրիարք Հայրը 107
Նախագահ Մ. Քինլիի Արևելեան Քաղաքականութիւնը 108
Թուրքընդյոյն պատերազմն և անոր հաւանական հետևանքը 122
Եւրոպիոյ յետադիմութիւնը և Թուրքիոյ լուծումը 129
Կրօնի դերը Քաղաքակրթութեան մէջ 137
Լաւ Նշաններ 145
Հայերը ծո՞յլ են 161
Ազգն և իւր Գլուխը—Աչըգեան, Իզմիրլեան, Օրմանեան 169
Դաշնակցականները 179
Հայոց Քաղաքական փորձառութիւնը. կնոջ քաղաքականութիւն և այր մարդու քաղաքականութիւն 187
Հայ Ազգութեան Պահպանիչ Հայ լեզուն 195
Յունաստանի փորձառութիւնը 201
Համիտի հրատարակչական Նոր Ձեռնարկը 209
Գուշակութիւն Ապագայի. թէ երբ պիտի կործանի Թուրքիա ևն. 233

ԱՅԵՆԱԲՕՍՈՒԹԻՒՆՔ

(Արտասահեալ ի խմբագրէն Հայքի այլևայլ առթիւ)

Քրիստոնեայ Հայաստանն և Քրիստոնեայ Տէրութիւնք 58, 74, 92
Մեր Ազգային սուղ Դասը 154
Հայ Երիտասարդին Ահագին Կարևորութիւնը 210

ՔԱՆԱՍԷՐԱԿԱՆ

Էվոլիւսիոն բառին հայերէնը 116
Գերուկի մը գրութիւնը 163
Կը՞ թէ կ' 164
Ակնայ գաւառաբարբառի ոչ «իսկական» Նմոյշ մը 164

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

Հրաժեշտ հայրենասիրին 61
Կիտուռ (Մշեցւոց բանաստեղծութիւն) 167

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Ակնէն 76, 132, 183
Ատանայէն 101, 123
Բարիզէն 207
Կ. Պոլսէ 147, 203, 228
Հէյվըրհիլէն 235
Պէռլինէն 231
Պոսթոնէն 220
Պուլկարիայէն 44
Սալմաստէն 204
Սիլիստրէէն 221
Վանցիէ մը նկատմամբ Վանի դէպքերուն 43
Օքսֆորտէն 221
Ֆրէզնոյէն 111, 166
Ֆօլ Ռիվըրէն 114

ԾՈՒՐ ՀԲԱՑԱԲԱԿՈՒԹԻՒՆՔ

Zeitoun 159
Impressions of Turkey 175
L'Armenie, son histoire, sa litterature, son role en Orient 136
History of the Armenians in India 31
History of Philosophy 210
Հրատարակութիւնք Ս. Դաւթեանի 190, 207, 219
Մենոր Անգլիերէն լեզուի 8
Բաֆֆիի գրոց նոր հրատարակութեան մասին 62, 166
Our troubles in Asia 184

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Փորի պնդութեան դէմ դեղ 194
Ջեռաց պատռտուքի դարման 229

ԶԱՆԱԶԱՆ

Ազգային Սահմանադրութեան պատմութիւնը 176, 180
Ակին ջարդին պատմութիւնը 131, 148, 157, 204
Ակնարկ մը անցեալին վրայ· Նազարպէկեան կատակերգութիւնը 124, 133
Ամերիկայի թերթերն ի՞նչ կ'ասեն «Հայքի» նկատմամբ 96
Ընդհանուր պատմութեան ուսումը հայ վարժարանաց մէջ 162
Թատրոն· Բաֆֆիի «Սալպի» անտիպ գրուածքից մի գլուխ 173
Թէ ինչպէս հայ տղայքը թրքանալէ կը փրկուին 147
Իրքնապաշտպանութիւն Հայոց 188
«Իրաւունք» լրագիրը 185
Կարևոր դիտելիք թափառող Հայոց համար 79
Կղերը անուղղելի է 197
Հակասական հեռագիրներ 165
Հայ Մարտիրոսներու յիշատակին 29, 223
Հայ որբերու համար հոգածութեան միջոցներ 12
Հայոց թիւը ի Փոքր Ասիա 123
«Հայք»ի անգլիերէն բաժինը 115
«Հայք»ի բաժանորդները քանի՞ կարգի կը բաժնուին 60
Զարին ազատական միտումները 29, 185
Մեծագոյն Նիւ Եորքը 230
Ռուսահայոց յառաջդիմութիւնը 116
Սուլթանը բռնադատելու որոշումը ճշմարի՞տ է 61
Սուլթանի ջատագովութիւնը Թէրէլի գրչակովը 218
Ֆռանսական համակրութիւն առ Հայս 11
Ֆռանսընդռուս նիզակակցութիւնը 177

ԱՄԵՐԻԿԱՅ Ի ՀԱՅՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԷՍ ՊԷՍ ԳՐԵԳԻՐՆԵՐ

Ամերիկայի Հայ ուսանողներուն 158
Ամերիկայի Հայոց անունը աւրուա՞ծ է 206
Ամերիկա եկող Հայերուն եօթը վտանգները 221
Անգլիերէնի դասեր նոր ուսանողներու համար 13, 29, 63, 103, 114, 142, 158, 190
Լայմէն Էպպոթի բանախօսութիւնն Նիւ Եորքի Հայոց 27
Փարքսի ատենախօսութիւնն Նիւ Եորքի Հայոց 45
Խադ վարդապետ Մարգարեանի քարոզը World լրագրին մէջ տեղեկագրուած 164
Հայ օրիորդները 13
Հայերն ինտո՞ր վարուելու են Ամերիկայի մէջ 12
Հայոց լսարան ի Ուէսթ Հօպօքըն 206
Մաշթոց վարդապետ Փափազեան (Հովիւ Ուստըրի Հայոց) 150
Մեռցուած Ամերիկացի Հայոց դատը 29
Նպարպէկեանք և Հնչակեանք ի Նիւ Եորք 113
Նիւ Եորքի աղքատախնամ մասնախումբը 135
Նիւ Եորքի Բարեգործական Ընկերութիւն Հայոց 206, 215, 222
Նիւ Եորքի մէջ բարեշրջում մը 127
Նիւ Եորքի մէջ (լսարան) 30
Նիւ Եորքի մէջ զուարճալի ժողով և խնդիր 234
Ուստըրի Հայկական Գրադարանի հինգերորդ տարեդարձը 150
Պօղիկեան գայթակղութիւնն ի Պոսթոն 94, 103, 112
Պոսթոնի Հայերը 235
Վաղինակ վարդապետ Սիսակեան· (Հովիւ Փրովիտէնսի Հայոց) 167
Վիճակագիրք Ամերիկայի Հայոց
Էթթլպօրօ 174
Էլմայրա 174
Թրոյ 165
Կալվսթոն
Հէյվըրհիլ 165
Հըսսըն 220
Հօլեօք 220
Մատիսըն
Նէչուա 174
Նիւ Հէյվըն 165
Նիւպէրիփորթ 174
Շիքակոյ 165
Ուիսքօնսին 174
Պինկամթըն 174
Պրուքչայր 165
Սէնթրըլ Ֆօլզ 174
Սըմիթ 215, 229
Սթէմֆըրտ 189
Սթէրլին 229

Միրաքուս
Վերմինիա Նահանգ 174
Փրովիտէնս 183, 198, 219
Քալիֆորնիա 102
Քոնքորտ 165
Օսթին
Ֆիլատէլֆիա 114
Ֆոլ Ռիվըր 174
Քաղաքային Ընտրութիւնք Մեծագոյն Նիւ Եորքում 213
Քաղաքացութիւն Միացեալ Տէրութիւններում 140
Քաղաքայիք և բնացման օրէնք Միացեալ Տէրութեանց 149
Օրէնք գաղթականութեան 111
Օրէնք և կառավարութիւնք Միացեալ Տէրութեանց Ամերիկայի 125, 134

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Իր. Սէնթրըլ Ֆոլզ, Central Falls, R. I.

Ըստ Ձեր պահանջման կը ղրկեմ տեղւոյս Հայոց մանրամասն վիճակագիրը։ 9 տարի առաջէն սկսեալ կամաց կամաց շատցած են հոս մերայինք և ամբողջ թիւը, մեծ թէ պզտիկ, 90 հոգի են։ Ասոնց մէջ 5 ընտանիք կան իրենց զաւակներով Հայաստանէն եկած։ 2 ճաշարաններ ունին. 1 պտղավաճառ, 1 նպարավաճառ։ երեք հոգի մէկ փայտի գործարան ունին. 2 կօշկակար, 2 սափրիչ, իսկ մնացեալք ընդհանրապէս գործարաններու մէջ կ'աշխատին, օրինակ բամպակի, կաշիի, ներկի, կերպասի, մետաքսի, պայտի, պողպատի, և այլն։ Մէջերնիս Անգղիերէն քանի մը հատ խօսողներ, բաւական կարդացողներ և երկու ալ դպրոց երթողներ կան. սիթիզեններ կան 30 հատ, շատերը Ռէփըպլիքի կողմն են։ Մեծամասնութիւնը Քարբերդէն են, ինչպէս, Քէսիրիկցի, Սիւրսիւրիցի, Մօրէնիկցի, Հիւսէյնիկցի, և մնացեալք Վանցի, Բալուայ Պաղն գիւղէն, Քղեցի, Ս. Վանքցի և այլն։

Մխիթարութիւն է ասել թէ ունինք նորակազմ թանգարան մը, որոյ մէջ կը գտնուին զանազան հնդինակներու գրքեր, գրեթէ 100 հատոր, զօր օրինակ, Բաֆֆիի, Դուրեանի, Հայրիկի և այլն։ Նաև ունինք քանի մը հայերէն թերթեր ինչպէս, Արմէնիա, Մշակ, Արձագանք, Իրաւունք, Հայք, Հնչակ, Դրօշակ—Հաքի քաղաքական-ազգային դպրոցները ամենէն աւելի ժողովրդական են հիմա հոսն թանգարանի սրահին մէջ դեռ ժողովները կ'ունենանք, ատենախօսները խոհեմութիւն և խորհրդաւոր գործունէութիւն կը քարոզեն և ուսումնասիրելը ամենէն կարևոր կը սեպուի։ Ուրախ եմ ըսել թէ Փրավիտէնսի հոգևոր հովիւն Դեր. Վաղինակ Վարդապետ՝ պաշտօն ունի տեղւոյս Հայերն ալ հովուելու, որոյ ջանիւք թանգարանը հաստատուեցաւ։

Գրադարանի ընծայ տալ փափաքողք կրնան ուղղակի 53 թիւ Central St. Central Fall's յղել. իրենց յիշատակներն կ'արձանագրուին և անջնջելի պիտի մնան հայ երիտասարդութեան սրտին մէջ։

Ց. Մ. Մ։

Լ. Նիւպէրիփորթ, Newburyport.

Քաղաքիս մէջ գտնուած Հայոց հաշիւն է։ 6 ընտանիք և 8 մանկունք են։ Ասոնք են 1 Ատանացի ընտանիք, 3 Խարբերդցի և 2 Արապկերցի. սոյն հաւաքումը ոչ ընկերութիւն, ոչ թանգարան, ոչ ալ ուրիշ հաստատութիւն մը ունին. այլ, մաս մը կրօնական ժողով, ունենալով իրենց միութիւնն միայն ամէն կիրակի իրիկուն ժամը 5 ին որոշուած տուն մը։

Իր. Փէթէրսըն, Paterson, N. J.

Թէ քաղաքիս մէջ այսքան Հայ ընտանիք ու անհատներ կային, մենք ալ չէինք կարծեր. հարցնողին կը պատասխանէինք թէ կան 10—12 ընտանիք, և 30—40 անհատներ։ Բայց ձեր խնդիրքին գրաւոր պատասխան մը տալու երբ ձեռնարկեցինք, ի զարմանս մեր գտանք թէ 24 ընտանիք կայ և 120 անհատ։ Աւասիկ քանի մը մանրամասնութիւն.—

13	ընտանիք	Տիարպէքիրցի	62	հոգի.
5	,,	Մարաշցի,	24	,,
1	,,	Թէքիրտաղցի,	2	,,
1	,,	Մալաթիացի,	2	,,
1	,,	Կէմէրէկցի,	2	,,
1	,,	Մալաթիացի,	2	,,
1	,,	Այնթապցի,	4	,,
1	,,	Զէյթունցի,	6	,,
24	,,		104	,,

Մնացածները ամուրի են կամ թէ իրենց կին և զաւակունք մայր հայրենիքն են դեռ, որոց ոմանք հիմա ճամբան են

հոս գալդ։

Այս մեր 24 ընտանեաց հինգը օտար աղջիկ առեր են ի կնութիւն։ Ասոր ի՞նչ կ'ասէք։ Աբելի՞ կա՛ ՀՀ՞ որ մեր երիտասարդները [illegible] ու լեզուէն աղջիկներ գտնեն։

Մեր աղջկանց թիւն է 21, տղայոցը՝ 35։ Երեսունը դպրոց կը յաճախեն։

Մէկ հայ մը ղրկինք, որ պատկերի հանձնակի խանութպան է, և նեղ հոգալ շապիկի վրայ աշխատող են. մեր բոլոր կ'աշխատին մեր գործարանը։

Կրօնական և բարոյական և իմացական բաներու մասին հոգ և փոյթ չկայ մեր մէջ. անհոգիւ հոս մ'ենք։ Եւ թունաւոր արօտներու վրայ ճարակող ոչխարներ ալ վախեմ չեն պակասիր։

Ե. Կ. Մ.

ՅԱՅԵԽՅԼՐ

Պատ. Հայկունի կը գրէ մեզ.—

Տիար Սեդրաք Մովսէսեանի՝ (որ Պոլսոյ վերջին կոտորածի առթիւ իւր աջ ոտքը կորսնցուցած հոս եկաւ) և Տիկնոջ համար Հայոց Բարեգործական Ընկերութեան ատենապետի և Տիար Ա. Ա. ի միջոցաւ հանգանակուած դրամի հաշիւ.

Հանգանակուած դրամի գումարն $105.45 է։ Այս գումարին 10 տոլարը միայն Սալվէյշը Արմիի կողմէն տրուած է, մնացածը Հիւ Եորքի Հայերը հանգանակած են։ Այս գումարի $87.50 ովը Տիար և Տիկին Մովսէսեանի համար տոմսակ գնուած է Քալիֆորնիայի համար, և մնացածն ալ թէ հոս և թէ ճանապարհի ծախուց յատկացուած է։

Այս հանգանակութեան մանրամասն ցուցակը գալ թուով։

TURKISH GEMS!

ՆԱՐՍԱՏԻՆ ՀՕՃԱՑԻՆ մէսէլներուն Անգղիերէն կոկիկ թարգմանութիւնը՝ հանդերձ Հօճային պատկերովն, գեղեցիկ տպագրութեամբ գրքոյկ մը, խիստ շատ յարմար Ամերիկացի բարեկամաց նուէր ընելու։ Գինը 25 սենթ միայն, ղրկելու ծախքը վրան։

Rev. S. Y. Bedickian
275 Ridge Ave.
Allegheny, Pa.

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

Անգղիացի ուղևորներու խմբակ մը Անտիոքի մօտ կալանաւորուելով բանտարկուած է 26 ժամ։ Անգլիական կառավարութիւնը ծանր զեկուցագիր մը ուղղած է Դրան։

Բուքարէշի մայրաքաղաքին մէջ, ի Պուքուրէսթ, քսան հազար հոգիէ բաղկացած խուժան մը յարձակելով Հրէից թաղին վրայ՝ կողոպտեր է խանութները։

Աւստրիա—Հունգարիոյ մէջ քաղաքական մեծ յուզմունք կայ։ Չեխերը կ'ուզեն Գերմանաց և Հունգարացւոց հետ հաւասար դիրք մը բռնել, իսկ Հունգարիա կը ձգտի անկախութեան։ Չեխերը կողոպտեցին Հրէից խանութները։

Ամերիկայի Միացեալ Նահանգաց կառավարութիւնը նոր փորձ մը կ'անէ Թուրքիայէն պահանջելու տուգանքը այն ՀՀասներուն որք ամերիկեան հաստատութեանց պատահեցան հայկական կոտորածներու ատեն։

Հէրալտի թղթակիցն ի Կարին հասած է, ուրկէ կը գրէ թէ հայկական շարժման քաղաքական բնութիւնը հաստատող փաստեր գտած է։

Հինգ հազար Ալպանիացիներու և թուրք զօրաց միջև կռիւ մ'է տեղի ունեցեր. երկուստեք կորուստը ծանր եղած է։

Դեկտ. 10ի հեռագիր մը կը ծանուցանէ թէ երկու զինուորներ Սուլթանը սպաննելու փորձ մ'են արեր, որ սակայն ներկայից չնորհիւ վրիպեր է։ Փատիշահը տանջել տուեր է զանոնք որպէս զի թելադրիչներու անուններն խոստովանիլ տայ, բայց զինուորները մեռեր են առանց խոստովանութիւն անելու։

Բեռերպուրկէն կը հեռագրեն թէ Ռուսական Ասիոյ մէջ ընդհանուր մահմեական անհանդարտութիւն կը տիրէ։ Այս կ'ընծայուի թրքական յաղթութեանց չափազանցեալ գրոյցներու։ Իշխանութիւնք կը կասկածին թէ Կովկասի մէջ վերջերս տեսնուած աւազակութիւնք գըրեթէ միայն կառավարակն պաշտօնէից դէմ է, և վրացիք ալ թշնամութիւն կը ցուցնեն Հայոց, ինչ որ տեսնուած չէր երբէք։ Վտանգը այնքան ծանր է որ Կովկասի կառավարիչներն հրաւիրուած են խաղաղացման միջոցներ ձեռք առնուլ։

կեդրոնական Ասիայէն եկող ուղևորներ կը պատմեն թէ ամեն տեղ Մահմետականներն մոռնալով իրենց փոխադարձ հին թշնամութիւններն՝ կը յայտարարեն թէ իրենք նախ և առաջ իսլամ են և Սուլթանը իրենց գլուխն է։ Ցայտնի է թէ ամենադոյզն առիթ մը հերիք է ապոտամբութիւն մը յառաջ բերելու և ընկղմելու զՌուսիա խռովութեան նոյն ծովուն մէջ ուր Հնդկաստան ընկղմած է։

Ամերիկացւոց Ազգային Հայախնամ Ցանձնախումբն անցեալ տարւոյ մէջ 35,500 տոլար յղած է ի Հայաստան որբանոցներու համար, և 180,000 տոլար ալ ընդհանուր և արհեստագործական օգնութեան համար։

Ը. Մ. ԳԱՐԱԳԷՈՒԶԵԱՆ

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ։ Քաղաքէն հեռու գտնուողք կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ։

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի։

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԳՈՐԳԵՐԸ ԻԲՐԵՒ ԸՆԾԱՑ

Անոնք որ կ'ուզեն իրենց գործատեարց և կամ այլ բարեկամաց նոր տարւոյ առթիւ տաճկական գորգ (խալը) նուիրել, կրնան ինէ գնել շատ աժան գնով։ Ունիմ նաև չինական և ճափոնական յարմար վաճառքներ։

Աղեքսանդր Թարաքճեան

Alex. T. Darak

77 West 11th St. City.

Վեցերորդ Էվինիւի անկիւն

***

Մեծատոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և Հաւաքեց

Տիգրան Մ. Պեարիկեանէ

Նիւ Եորք, 1897։

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէնու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ։ Եօթը հազար բառ կայ։

Գինն է 50 սէնթ կամ 2½ Ֆրանք։

Դիմել առ ՀԱՅԿԻ խմբագիրն

341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղղին գիրք չենք կրնար յղել։

ՀԱՐՀԱՐԱՆ ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

ԼԱՆԹԷՄԻ

Նախաճաշ	40 սէնթ
Կէս աւուր ճաշ	40 սէնթ
Ընթրիք	75 սէնթ

Գինովմէկտեղ

Սենեակի վարձք Հօթէլին մէջ

օրը 75 սէնթ

4 Union Square (East side) bet. 16th & 17th sts.

***

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիւ Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

***

ԹԱՆԿ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և դրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ պատուական հնութիւններ։ Մեր վաճառատունն է ի թիւ 390 5 th Ave., Նիւ Եորք։

ՏԻԳՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ։

***

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ